Լիլիթ Սարգյան

Հաշվետու ժողովի հարգելի՛ մասնակիցներ,

Ինչպես նշեց պարոն Հարությունյանը, տարին իսկապես շատ բարդ էր: Նախ և առաջ ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորիդ այս դժվարին պայմաններում ձեր առջև դրված խնդիրները անշեղորեն կատարելու համար, որի արդյունքում ինստիտուտը հրապարակումների տեսանկյունից ապահովել է գրեթե նույն ցուցանիշներն, ինչ նախորդ տարի խաղաղ և ոչ արտակարգ իրավիճակի պայմաններում: Սա վկայում է բոլորիդ պատասխանատվության բարձր աստիճանի մասին: Սակայն բացի պատասխանատվությունը կրիտիկական պայմաններում աշխատելը ինձ համար տեսանելի դարձրեց նաև շատ այլ գծեր, մասնավորապես այն հոգատարությունը, որ ցուցաբերվել է միմյանց նկատմամբ ռազմական դրության և հատկապես հերթապահության ժամանակ: Դժվարությունները շատ էին, բայց այդ դժվարությունները միավորեցին մեզ և դարձրեցին ավելի ամուր ընտանիք, քան էինք նախկինում: Իսկ այս ձեռքբերումը չէինք ունենա, եթե մեր կողքին հայրաբար կանգնած չլիներ պարոն Հարությունյանը: Ուզում եմ բոլորիդ անունից շնորհակալություն հայտնել պարոն Հարությունյանին այս ծանր պայմաններում ինստիտուտի աշխատանքները արդյունավետ կառավարելու, բոլորիս խնդիրներով առնաձին-առանձին հետաքրքրվելու և հնարավորության սահմաններում դրանք թեթևացնելու համար, իր փորձով մեզ հետ կիսվելու, մեզ ավելի հանդուրժող, համեստ և նպատակասլաց դարձնելու համար:

2020թ. իմ ղեկավարությամբ իրականացվել է 2 ծրագիր՝ մեկը բազային, մյուսը թեմատիկ ֆինանսավորմամբ:

«**ՕՈՒՆ ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարության մշակումը՝ որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակայություն**» թեմայի շրջանակներում վերլուծվել է ՕՈՒՆ դինամիկան և բաշխումը Հայաստանում՝ բացահայտելով առկա խնդիրները: Ուղղակի որպես օրինակ դրանցից մեկը կնշեմ. 2018 թ.դրությամբ ՀՀ ՕՈՒՆ ներհոսքի մեծ մասն ապահովվել է ՌԴ-ից, Գերմանիայից և Ջերսի կղզուց: Վերջինս թերևս պետք է մտահոգությունների առիթ տա, քանի որ հանդիսանում է հիմնականում սև փողերի օֆշորային գոտի, և բավական բարդ է իրական ներդրողին բացահայտելը, ինչը կարող է հետագայում առաջացնել ազգային անվտանգության խնդիր Հայաստանի համար: Այս հանգամանքը հետագայում պետք է մեծ ուշադրության արժանանա, քանի որ աստիճանաբար ավելի սրվում է մեր անվտանգության հարցը:

Տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ բացահայտվել են ՀՀ տնտեսության վրա ՕՈՒՆ ազդեցության այնպիսի օրինաչափություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ երկարաժամկետ զարգացման ռազմավարություն մշակելիս.

1. ՕՈՒՆ ներհոսքի աճը ավելի արագ ազդում է գործազրկության մակարդակի կրճատման և ավելի դանդաղ՝ աղքատության մակարդակի կրճատման վրա: Սակայն գործազրկության մակարդակի անկումը ևս հետագայում հանգեցնում է աղքատության մակարդակի նվազման: Ուստի ստացվում է, որ ՕՈՒՆ ներհոսքը աղքատության նվազման վրա

ունենում է ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված ազդեցություն՝ գործազրկության մակարդակի անկման միջոցով:

2. ՕՈՒՆ ներհոսքը կարճ ժամանակ անց նպաստում է ներմուծման աճին: Ներմուծման աճն էլ իր հերթին նպաստում է արտահանման աճին, քանի որ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների ներմուծման մեջ հիմնական մասը հումքն ու սարքավորումներն են և սա էլ շղթայաբար հանգեցնում է հաջորդ ժամանակահատվածի ՀՆԱ-ի աճին:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով գնահատվել է ՕՈՒՆ ազդեցության չափը մի շարք ցուցանիշների վրա, որոնք ես այս պահին չեմ ներկայացնի, քանի որ ստեղծված իրավիճակում այդ ցուցանիշներն արդեն կտրուկ փոփոխությունների են ենթարկվելու:

Թերևս սրանք այն տեսական գիտական արդյունքներն են, որ ստացել ենք վերլուծության արդյունքում: Անդրադառնանք կիրառականին:

Ակնհայտ է, որ ՕՈՒՆ ներհոսքը զգալի ազդեցություն ունի ՀՀ տնտեսության զարգացման տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել ներդրումների ներհոսքին խոչընդոտող գործոնները և առաջարկել դրանց լուծման ուղիներ: Դրա համար մենք վերլուծել ենք թվով 50 ցուցանիշներ, որոնք ազդում են ներդրումների վրա, վերլուծել ենք օրենսդրական դաշտը, ինչպես նաև իրականացրել են սոց. հարցում 1832 (99 % վստահելիության մակարդակ և առավելագույնը 3 % սխալի հավանականություն թույլ տալու համար) կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում, որոնցից 521-ը՝ օտարերկրյա կապիտալով: Քանի որ թեման սկսել էինք նախորդ տարվա հոկտեմբերից, ուստի այդ պահից մինչև 2020թ. փետրվար հարցումն իրականացվել է դեմ առ դեմ հանդիպումների, իսկ համավարակի պայմաններում՝ սոցիալական հարթակների միջոցով:

Հարցման արդյունքում բացահայտվել են մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնց լուծման նպատակով առաջարկները մշակվել են՝ հիմնվելով տարբեր երկրների փորձի և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորության վրա: Վերլուծության արդյունքում մեր կողմից առաջարկվել է ներդրումային դաշտի բարելավման ռազմավարություն մշակելու հստակ մեթոդաբանություն, ինչպես նաև ներկայացվել է դրա նախնական տարբերակը: Մեթոդաբանության մի քանի կետ ես կցանկանայի առանձնացնել.

- Մշակել ՀՀ տնտեսության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն՝ չափելի թիրախներով :
- Ռազմավարությունը մշակելիս բացառել պետական մարմինների գործառույթների կրկնությունը:
- Մշակել տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարություն: Ռազմավարությունը մշկելիս խուսափել «Գործարար միջավայրի բարելավման ռազմավարության» մեջ տեղ գտած թերությունների կրկնությունից՝ մակերեսային վերլուծության արդյունքում ռազմավարության մշակում, չափելիության բացակայություն, իրագործման վերահսկելիության անհնարինություն, իրավիճակի ոչ ճշգրիտ ներկայացում և ներուժի սխալ գնահատում:

- Նախապես կատարած խոր վերլուծության հիման վրա հստակ ներկայացնել ՀՀ ներդրումային միջավայրի առավելություններն ու թերությունները:
- Առանձնացնել խնդիրների լուծման փաթեթներ: Մասնավորապես՝ սույն վերլուծության ժամանակ մեր կողմից առանձնացվել են ընդհանուր բնույթի և օրենսդրական դաշտի թերությունների և համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպությունների խնդիրների լուծմանն ուղղված փաթեթներ:
- Ներդրումների ներգրավման ռազմավարության մեջ հստակ հաշվարկների հիման վրա ներկայացնել ՀՀ ներդրումային հեռանկար ունեցող ոլորտները: Մեր կողմից բացահայտվել են 64 անուն ապրանքախմբեր, որոնց արտադրության ոլորտներն ունեն ներդրումային հեռանկար կամ այն ձեռք կբերեն առաջիկա 10 տարիների ընթացքում:
- Մշակված ռազմավարությանը կից ներկայացնել առնվազն 10-ամյա պարբերականությամբ թարմացվող հավելված, որտեղ վերոնշյալ եղանակով հաշվարկների հիման վրա տվյալ պահի դրությամբ կներկայացվեն նոր ոլորտներ, որոնք կունենան ներդրումային գրավչություն:

«Արտահանումը՝ որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ոլորտային ռազմավարություն)» թեմայի շրջանակներում հիմնավորվել է, որ սահմանափակ ներքին պահանջարկը չի կարող հանդիսանալ երկարատև կայուն տնտեսական աճի գրավական, ուստի տնտեսական աճի հետագա տեմպերի պահպանման համար մեծ կարևորություն է ստանում արտաքին պահանջարկը: Այսինքն՝ արտահանումը կարող է դառնալ հետագա զարգացման հիմնական աղբյուր՝ հնարավորություն տալով արտադրողներին օգտվել մասշտաբի էֆեկտից: Թեմայի կատարման արդյունքում բացահայտվել է տնտեսական աճի վրա արտահանման ազդեցության գիտական հետագիծը: Ըստ այդմ՝ արտահանման աճը նպաստում է մասշտաբի էֆեկտից տնտեսման, ինչպես նաև՝ արտարժույթի ներհոսքի, որոնք էլ կարող են հանգեցնել ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման և՝ անհրաժեշտ հումքի և նոր տեխնոլոգիաների ներմուծման: Արդյունքում՝ հանգում ենք արտադրողականության աճի և ավելի բարձր ավելաց-ված արժեքի ստեղծման, հետևաբար և՝ տնտեսական աճի: Բացի այդ էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ բացահայտվել են վերոնշյալ մեխանիզմի առանձին փուլերի տևողությունը ՀՀ-ում: Այսպես՝ արտահանման աճը մինչև 3 ամիս ժամանակահատվածում հանգեցնում է փոխարժեքի արժևորման, որն էլ նպաստում է ներմուծման աճին՝ ընդհուպ մինչև 9 ամիս ժամանակահատվածում: Հումքի և մեքենա սարքավորումների ներմուծման աճն էլ իր հերթին պատճառ է հանդիսանում տնտեսական աճի առաջիկա 3.5 տարվա համար:

ՀՀ արտահանման կառուցվածքի ներկայիս վիճակի վերլուծությունը ցույց է տալիս դրանում առկա լուրջ հիմնախնդիրները. նախ՝ արտահանման մոտ 80%-ը ապահովվում է միայն 4 ապրանքախմբի հիման վրա, ուստիև արտահանումը ՀՀ-ում բարձր աստիճանի կենտրոնացված է, բացի դա ի համեմատ 2001թ. 2019թ. դրությամբ ՀՀ արտահանման մեջ էապես ավելացել է ռեսուրսատար ապրանքների արտահանման տեսակակար կշիռը և նվազել է բարձր և միջին

տեխնոլոգիատար ապրանքների արտահանման տեսակարար կշիռը, որը շատ մտահոգիչ է: Տնտեսական աճի վրա արտաքին առևտրի ազդեցությունն առավելապես դրական դարձնելու նպատակով առաջարկվել են հետևյալ քայլերը.

– ՀՀ արտահանման կառուցվածքում ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումից աստիճանաբար անցում կատարել դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտադրություն և արտահանում,
– ներմուծման կառուցվածքում մեծացնել արդյունաբերական նպատակներով օգտագործվող մեքենա-սարքավորումների և այն արդյունաբերական հումքի ներմուծումը, որը բնակլիմայական և այլ պատճառներով տեղում հնարավոր չէ արտադրել կամ դրա արտադրությունը տնտեսապես անարդյունավետ է:

Հաշվետու ժամանակահատվածում իմ խմբում կողմից հրապարակվել է 1 գիրք և 34 հոդված.

№	Թեմայի կատարողներ		Հրապարակումներ		
			Հոդվածներ		գրքեր
			արտասահ-մանյան	տեղական	
1.	**Թեմայի ղեկավար՝**	տ.գ.թ., Լ.Սարգսյան	8	0	1
	Կատարողներ՝				
2.		Ա. Սարգյան	4	0	-
3.		Տ.Ճահինյան	5	0	-
4.		Ս.Մարգարյան	8	0	-
5.		Դ.Գրիգորյան	9	0	-
	Ընդամենը		***34***	***0***	***1***

Շնորհակալություն: